ԼԵՎՈՆ ՇԻՐԻՆՅԱՆ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ քաղաքագիտության և իրավունքի պատմության ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՏԱԹԵՎԻԿ ՇԻՐԻՆՅԱՆ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ քաղաքագիտության և իրավունքի պատմության ամբիոնի դասախոս

ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԸ (ԴԻՍԿՈՒՐՍԸ) ԵՎ ՆՐԱ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Յուրաքանչյուր պետության, թերևս, քաղաքական զարգացման պատմական որևէ պահի կանգնում է ընտրության առաջ. դառնալ ժամանակակից՝ արդիականանալով: Այստեղից էլ արդիականացման տեսության հետագա մշակման և արդիականացման ուղու ընտրության հիմնախնդիրը, որը հավասարապես վերաբերում է ինչպես հայ քաղաքական մտքին, այնպես էլ ՀՀ համակողմանի զարգացմանը: Դժվարությունը հետևյալի մեջ է՝ արդիականանալ արևմտականանալով, թե՞ արդիականանալ «մշակութային սեփական միջուկի» հիմքի վրա: Այստեղից էլ քաղաքագիտական լայն խոսույթի (դիսկուրս) անհրաժեշտությունը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ արդիականացում, արևմտականացում, ավտոխտոն զարգացում, վերառում (գերմաներեն aufheben), միջազգային փորձի համադրում:

Ճշգրիտ է ասված. «Ամեն մի կենդանի էակ, որն օժտված է բանականությամբ, անպայմանորեն շարժվում է, փոխվելով ժամանակի և տարածության մեջ: Դա նրա գոյության եղանակն է: Փիլիսոփայական տեսանկյունից փոփոխությունը բոլոր օբյեկտների և երևույթների կեցության բնական վիճակն է, որն իրենից ներկայացնում է մշտական անցում մի վիճակից մյուսը»: Ընդամին «պատմության մեջ չեն եղել և չեն կարող լինել մարդկային հանրույթներ՝ զուրկ գործողություններից և զարգացումից: Փոփոխությունները, լայն իմաստով, իրենց մեջ ընդգրկում են էվոլյուցիոն գործընթացներ, ինչպես նաև աշխարհում նոր երևույթների առաջացում...»:

Մերժելով փոփոխությունների միագիծ պատկերացումը, Ա. Ի. Սոլովյովը առանձնացնում է փոփոխությունների երեք հիմնական ձևեր: Այն է՝

ա) գործելը (վերարտադրություն)՝ քաղաքական երևույթների փոփոխություններ, որոնք քաղաքացիների վարքագծի ձևերը, իշխանության ինստիտուտների գործառույթը կամ ձևավորված քաղաքական համակարգը որպես ամբողջություն դուրս չեն բերում իրենց հիմնարար պարամետրերի ու հիմնավորումների շրջանակներից (օրինակ, նման փոփոխությունները հանդես են գալիս որպես երկրում քաղաքական ուժերի այս կամ այն փոխհարաբերություն կամ կառավարող վերնախավի (էլիտայի) և ընտ-

րազանգվածի (էլեկտորատ) պարզ վերարտադրություն, որոնք պահպանում են հասարակության մեջ ձեռք բերված կայունությունը),

բ) զարգացումը՝ բնութագրում է քաղաքական երևույթների հիմնարար, համակարգային պարամետրերի ձևափոխությունը նրանց հետագա էվոլյուցիայի դրական (պոզիտիվ) ուղղվածությամբ (փոփոխությունների նման տեսակը նշանակում է, օրինակ, քաղաքական համակարգի կողմից այնպիսի հնարավորությունների ձեռք բերում (նվաճում), որոնք նրանց թույլ են տալիս համարժեքորեն պատասխանել ժամանակի մարտահրավերներին, արդյունավետորեն կարգավորել և կառուցել հասարակական հարաբերությունները),

գ) անկումը (քայքայում, ավերում, բացասական զարգացում)՝ երևույթների հիմնարար պարամետրերի փոխակերպություն (տրանսֆորմացիա), որը, սակայն, ենթադրում է նրանց էվոլյուցիայի բացասական (նեգատիվ) հեռանկար (ինչը դրսևորվում է, օրինակ, քաղաքական վարչակարգի անկումով, կուսակցությունների արձակումով, ազրեսիան և պետության գրավումը արտաքին ուժերի կողմից և այլն):[1]

Ուստի, անկումը կամ քաղաքական «ետընթաց կերպափոխությունը» (Պյոտր Ստրուվե) կանխորոշում է քաղաքական ձևերի և հարաբերությունների փոխակերպման այնպիսի եղանակ, որը ենթադրում է այդ երևույթների էվոլյուցիայի բացասական (նեգատիվ) հեռանկար:[2] Մասնավորապես, երբ վարչակարգի կողմից ընդունված որոշումներն այլևս չեն կարողանում կայունացնել և կարգավորել քաղաքական և այլ հարաբերությունները, որի հետևանքով վարչակարգը կորցնում է իր գոյության համար խիստ կենսական կայունությունն ու լեգիտիմությունը: Ուստի, չի սխալվում Ֆրեդ Ռիգսը, երբ նեգատիվ զարգացումը դիտում է էվոլյուցիայի այնպիսի տեսակ, որի պարագայում մի ենթահամակարգի զարգացումը չի ուղեկցվում մի այլ ենթահամակարգի զարգացումով:[3]

Ուրեմն, հասկանալի է, որ արդիականացման տեսության (տեսությունների) շրջանակներում բավարար չէ այն ըմբռնումը, թե «քաղաքական զարգացման հայեցակարգում կենտրոնական դեր է խաղում քաղաքական արդիականացման տեսությունը»:[4] Որ՝ «Զարգացման ժամանակակից վերլուծություններում հատուկ բնագավառներ են արդիականացման հայեցակարգերն ու սոցիո–մշակութային փոխակերպումները»:[5] Իրավացի է Գ. Ն. Սոկոլովան, երբ գրում է. «Հաջողակ արդիականացման համար յուրաքանչյուր պետությանը, անկախ նրա տարածքային չափերից և բնական պայմաններից, անհրաժեշտ է ունենալ գիտության զարգացման նշանակալի մակարդակ որպես տեխնոլոգիական նորամուծությունների աղբյուր և միջավայր ձեռք բերված տեխնոլոգիաների յուրացման համար: Այդ մակարդակը որոշվում է ընդհանուր առմամբ գիտության և տնտեսության կառուցվածքով և վիճակով, հասարակության զարգացման քաղաքական և սոցիալ–տնտեսական նպատակներով»:[6]

---

[1] Соловьев А. И., Политический процесс.– Политология. Лексикон. Под ред. А. И. Соловьева. М., РОССПЭН, 2007, с. 568.

[2] Տե՛ս Соловьев А. И., Политология. Политическая теория и политические технологии. 2–е изд., перераб. и доп., М., 2008, с. 287–288.

[3] Նույն տեղում, էջ 288:

[4] Политология. Под ред. М. А. Василика. М., 2008, с. 452.

[5] Абушенко В. Л., Развитие.– Социология. Энциклопедия. Сост. А. А. Брицалов и др., Мн., 2003, с. 824.

[6] Соколова Г. Н., Модернизация.– Социология. Энциклопедия. Сост. А. А. Брицалов и др., Мн., 2003, с. 584.

Ակնհայտ է, որ հետխորհրդային երկրները, նույնիսկ Արևելյան Եվրոպայի նախկին սոցիալիստական երկրները, կարիք ունեն արդիականացման: Հայաստանի Հանրապետության համար հիմնախնդիրը, ըստ էության, վերածվում է հասարակության զարգացման անհետաձգելի պահանջի, այն նկատառումով, որ, մի կողմից, անխուսափելի փոփոխությունների հետևանքով տեղի չունենա հայ ինքնության աղճատում և կորուստ, մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետությունը արդիականացման արդյունքով դառնա ժամանակակից:

Բնական է, տվյալ պարագայում օգնության է հասնում ինչպես առկա համաշխարհային փորձը, մանավանդ հաջողված երկրներինը, այնպես էլ արևմտյան հասարակագիտության շրջանակներում մշակված արդիականացման տեսությունը (տեսությունները):[1] Ընդսմին, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում, թող զարմանալի չթվա, մարքսիզմի տեսանկյունից տվյալ տեսությունների քննադատությունը:[2]

Ճիշտ է, որ արդիականացումը որպես տեսական հայեցակարգ սկսեց գնահատվել XX դարի 50–60–ական թվականներին, սակայն այն իր ակունքում ունի XIX դարի և XX դարի առաջին տասնամյակների մտածողների հիմնադրույթները: «Դասական սոցիոլոգիայում,–գրում է Գ. Ն. Սոկոլովան,–տվյալ տերմինը Էմիլ Դյուրկհայմի կողմից իմաստավորվեց որպես սոցիալական բազմազանեցման (դիֆերենցիացիա) գործընթաց, որի միջոցով էլ տեղի էր ունենում աշխատանքի հասարակական բաժանումը, Մաքս Վեբերի կողմից՝ որպես բանականացման (ռացիոնալիզացիա) գործընթաց, որի ընթացքում տնտեսվարող ենթակաները (սուբյեկտները) ձգտում էին առավելագույնս բարձրացնել սեփական տնտեսական վերադարձը (отдача), Կարլ Մարքսի կողմից՝ որպես ապրանքայնացման գործընթաց, երբ ապրանքներն ու ծառայությունները ավելի ու ավելի շատ էին արտադրվում շուկայի համար»: Ընդ որում «արդիականացման վճռական գործոնը սոցիալական փոփոխություններին և տնտեսական աճին խոչընդոտող ավանդական արժեքների հաղթահարումն է, ինչպես նաև նրանց փոխարինումը այն արժեքներով, որոնք հիմնավորված/պատճառաբանված (мотивирующие) մղում են տնտեսվարող սուբյեկտներին իննովացիոն (նորարարական) գործունեության՝ մշակելու, ստեղծելու և տարածելու նոր տեխնոլոգիաներ և հասունացնելու (արտադրելու/ծնելու/առաջացնելու, генерировать) նոր կազմակերպական–տնտեսական հարաբերություններ»:[3]

Ինչ վերաբերում է արդիականացման տեսությանը, նա ևս ստեղծվել է 20–րդ դարի 50–60–ական թվականներին, որի ինչպես ընդհանուր տեսությունը, այնպես էլ նրա առանձին դրսևորումները, հենվում էին 19–րդ դարի վերջերի, 20–րդ դարի առաջին տասնամյակների եվրոպական մտածողների տեսական ժառանգության վրա: Այստեղ, բնականաբար, պետք է նկատի ունենալ Մաքս Վեբերին, նրա այն իդեան, որ եվրոպական քաղաքակրթությունը զարգանում է ավանդականից դեպի ժամանակակիցը՝ վարքի ռացիոնալացման ճանապարհով և աճի

[1] Տես, օրինակ՝, Ковалев А. Д., Модернизации теории.– Современная западная социология. Словарь. М., 1990, с. 193–197.

[2] Տես, Критика теории модернизации. Научно–аналитический обзор. М., 1985, 77 с.; Критический анализ буржуазных теорий модернизации. Сборник обзоров. М., 1985, 240 с.

[3] Соколова Г. Н., Модернизация.– Социология. Энциклопедия. Сост. А. А. Брицалов и др., с. 584.

հոգևոր գործոնների ազդեցության տակ: Էական նշանակություն ունեցավ Ֆերդինանդ Տյոնիսի և Էմիլ Դյուրկհայմի տեսական ժառանգությունը, կոնկրետ՝ նրանց այն դրույթը, որ հասարակությունը աշխատանքի բաժանման հիման վրա ապրում է էվոլյուցիա՝ «մեխանիկական համերաշխությունից» դեպի «օրգանական համերաշխություն»: Թալկոտ Պարսոնսի կառուցվածքա–գործառնական վերլուծության այն պոստուլատները, որոնց շրջանակներում նախատեսված է քաղաքական գործընթացների հանդեպ համակարգային մոտեցման տեսակետը (պահանջը), ինչպես նաև այնպիսի հայեցակարգերի ծնունդը, որոնք հիմնված են արդիականացման ունիվերսալ (ընդհանրական) բաղադրիչների առանձնացման վրա[1*]: Հայեցակարգեր էին մշակվում «երրորդ աշխարհի» համար: Այդուհանդերձ, 20–րդ դարի երկրորդ կեսին պարզ դարձավ, որ արդիականացման տեսության հեղինակները անտեսել են սոցիոմշակութային առանձնահատկության (սպեցիֆիկա) խնդրակարգը, հետևապես՝ իներցիայի ուժով անփոփոխ են թողել արևմտյան քաղաքակրթության ունիվերսալության տեսակետը: Սակայն, 20–րդ դարի վերջին տասնամյակներին տարբեր երկրներում արդիականացման քաղաքականության ուղու վրա առաջացած դժվարությունները, ձախողումները («մասնակի արդիականացում», «փակուղային արդիականացում», «արդիականացման ճգնաժամային ախտանիշ» և այլն) տեսաբաններին պարտադրեցին վերանայել նախկին ընդհանրական մոդելները և կատարել զարգացման գործընթացների համեմատական վերլուծություններ, ուղղել, շտկել, ճշտել արդիականացման տեսությունը (տեսությունները): Տևական որոնումների և գործնական քաղաքականության որպես արդյունք, սակայն, տարբեր հեղինակների մոտ ձևավորվեցին արդիականացման տարբեր ոլորտների յուրահատուկ սանդղակներ, որոնք թույլ տվեցին ունենալ հաջողված արդիականացումների մոդելների ուրվագծերը, այդպիսով կանխորոշելով զարգացումների ռազմավարական ուղենիշները:

Անդրադառնանք դրանցից մի քանիսին և, անշուշտ, էականներին:

Ա. Վ. Գորդոնը գրում է, որ երկրորդ աշխարհամարտից հետո արևմտյան քաղաքագիտական միտքը նախատեսելով երրորդ աշխարհի երկրների արդիականացումը, այն հասկանում էր որպես նրանց «արևմտականացում» (վեստերնիզացիա, անգլ. «western» արևմտյան բառից): Ընդսմին, նշում է նա, «հարացույցը զարգանում էր բազմաթիվ գիտական աշխատություններում, տարափոխվում էր զանազան տեսություններում, հիմնավորվում էր բազմազան պատմական, տնտեսական, քաղաքական և այլ նյութով՝ էությամբ մնալով անփոփոխ: Ելնելով զարգացած երկրների պատմական փորձից, արդիականացման ծրագիր էին մտցնում տնտեսական աճը, արդյունաբերականացումը (ինդուստրալացումը), քաղաքայնացումը (ուրբանիզացիա),

[1*] Արդիականացման տեսությանը նվիրված հարուստ գրականության մեջ կարելի է առանձնացնել հետևյալ աշխատանքները. Almond G. A., Powell G. B., Comparative Politics: A Developmental Approach. Boston, Toronto, 1966. Apter D., Politics of Modernization, Chicago, 1965. Pye L., Aspect of Political Development, Boston, 1966. Eisenstadt S., Modernization: Protest and Change. Englewood Cliffs, 1966. Huntington S. P., Political Order in Changing Societies. New Haven–London, 1968. Rostow W., Stages of Economic Growth: A Non–Communist Manifesto. Cambridge, 1960. Black C. E., The Dinamics of Modernization: A Study of Comparetive History. New York, 1966.

շուկայական հարաբերությունների վերածումը տնտեսավարման ընդհանրական (ունիվերսալ) սկզբունքի, մասնավոր սեփականության ինստիտուտի համախմբումը և այդ հիմքի վրա ձեռնարկչության զարգացումը, գրագիտության և հաղորդակցության նորագույն միջոցների տարածումը, անհատի մեկուսացումը (առանձնացածությունը) մեկուսացածությունը, առանձնացումը, обособленность), սոցիալական կապերի դիմազրկումը, աշխարհականացումը և ռացիոնալ աշխարհընկալման մշակումը, իրավակարգի և քաղաքական կառուցվածքի ժողովրդագրական ձևերի ներդրումը, կենտրոնացված ազգային պետությունների ստեղծումը»:[1]

Միաժամանակ, Ա. Վ. Գորդոնը բացելով փակագծերը, ցույց է տալիս արդիականացման տեսությունների թույլ (խոցելի) տեղը՝ երկճյուղումը (դիխոտոմիա), «պատկերացումը զարգացող հասարակությունների մասին որպես զարգացածների հակոտնյայի՝ սոցիալ–տնտեսական և մշակութա–մարդաբանական բնութագրերի ողջ հանրագումարով»: Տարբերությունը տվյալ հասարակությունների միջև հանգում էր մի շարք հակադրությունների շարքի. ագրարային՝ ինդուստրիալ, վերաբաշխիչ սահմանափակ նյութական պաշարներ և կարգավորվող հասարակական պահանջներ՝ կողմնորոշում դեպի արտադրության և պահանջմունքների անսահմանափակ աճ, հեղինակազոր (ավտորիտար)՝ ազատական (լիբերալ), ստորակարգվող (հիերարխիկ)՝ հավասարապաշտ (էգալիտար), փակ՝ բաց, ընտանեսիրություն/ընտանեկանություն (խնամիականություն) (նվիրվածություն առաջնային սոցիալական բջջին)՝ քաղաքացիականություն (օրինապահություն հասարակությանն ու պետությանը), «լուծված» (հոտային) անձնավորություն՝ ինքնուրույն անհատ, հարմարվողականություն՝ ստեղծագործ անձնավորություն և այլն: Նման շարքի ձախ մասը կազմում էր «ավանդական հասարակության», իսկ աջ մասը՝ «ժամանակակից հասարակության» «մոդելը»:[2]

Ավանդական և ժամանակակից հասարակությունները բնորոշող գծերի իրենց սանդղակն են ներկայացնում «Արդիականացում. հավասարությունից՝ ազատություն» մենագրության հեղինակներ Վ. Վ. Կոզլովսկին, Ա. Ի. Ուտկինը, Վ. Գ. Ֆեդոտովան: Ըստ նրանց, ավանդական հասարակության բնորոշ հետևյալ գծերը ձևափոխվում են արդիականի «համարժեքներով»: Դրանք են.

Ավանդույթների գերիշխումը նորարարությունների վրա (Նորարարությունների գերիշխումը ավանդույթների վրա). Սոցիալական կյանքի կախվածություն կրոնական կամ առասպելաբանական պատկերացումներից (Սոցիալական կյանքի աշխարհիկ կազմակերպում). Զարգացման ցիկլային բնույթ (Զարգացման աստիճանական բնույթ՝ պրոգրես). Կողմնորոշում դեպի մետաֆիզիկական և ոչ թե գործիքային արժեքներ, արժեքային ռացիոնալություն (Կողմնորոշում գործիքային և ոչ թե մետաֆիզիկական արժեքներ, նպատակառացիոնալություն). Հետաձգված (отложенный) պահանջմունքների բացա-

[1] Гордон А. В., Самюэль Хантингтон и его концепция политической модернизации.– Хантингтон С., Политический порядок в меняющихся обществах. Пер. с англ., М., Прогресс–Традиция, 2004 с. http://yanko.lib.ru/books/politologiya/huntington–polit_poryadok–ru–a.htm, 11.09.2013

[2] Նույն տեղում, էջ 17, http://yanko.lib.ru/books/politologiya/huntington–polit_poryadok–ru–a.htm, 11.09.2013

կայություն՝ արտադրություն հանուն ներկայի, կոնսյումերիզմի (սպառողականության) բացակայություն (Հետաձգված պահանջմունք՝ արտադրություն հանուն ապագայի, Կոնսյումերիզմ). Հատուկ հոգեկերտվածք՝ ոչ գործուն անձնավորություն (Գործուն անձնավորություն). Կողմնորոշում դեպի աշխարհայացքային գիտելիքներ և ոչ ճշգրիտ գիտություններ ու տեխնոլոգիաներ (Կողմնորոշում դեպի ճշգրիտ գիտություններ և տեխնոլոգիաներ ու ոչ աշխարհայացքային գիտելիքներ):[1]

(Սույն հեղինակները առաջարկում են նաև հետժամանակակից հասարակության բնորոշ գծի սանդղակ, սակայն մեզ այն, տվյալ պարագայում, չի հետաքրքրում):

Արդիականացման հետաքրքիր և, թերևս, ավելի տրամաբանված համակարգ–սանդղակ է առաջարկում Դենիել Լերները, որի նպատակը գլոբալ գործընթացի բացահայտումն է՝ ավանդական հասարակությունների փոխակերպումը ժամանակակցի (modern) ապահովելու համար: Նրա կարծիքով, «(1) Քաղաքական արդիականացումը ենթադրում է որոշակի հանգուցային հաստատությունների (ինստիտուտների)՝ քաղաքական կուսակցությունների, խորհրդարանների, ընտրական իրավունքի և գաղտնի քվեարկության զարգացում, որը նպաստում է որոշումների ընդունմանը բնակչության մասնակցության հիմքի վրա (participatory decision – making): (2) Մշակութային արդիականացումը սովորաբար ծնում է աշխարհիկացում (секуляризация) և նվիրվածություն ազգայնական գաղափարախոսություններին: (3) Տնտեսական արդիականացում՝ տարբեր արդյունաբերականացումից, կապված է խորը տնտեսական փոփոխությունների հետ՝ աշխատանքի ավելի նշանակալի բաժանումով, կառավարման մեթոդների և կատարելագործված տեխնոլոգիաների օգտագործումով, ինչպես նաև առևտրի (կոմերցիա) համար նպաստավոր պայմանների զարգացումով: (4) Սոցիալական արդիականացումը ենթադրում է քաղաքայնացում (ուրբանիզացիա) և ավանդական հեղինակության անկում: Այդ բոլոր փոփոխությունները դիտվում են սոցիալական և կառուցվածքային տարբերացման (դիֆերենցիացիա) տեսանկյունից»:[2]

Արդիականացման տեսությանն ու մեթոդաբանության տարբեր կողմերին նվիրված մի ամփոփ աշխատանքում Ա. Ա. Մալցևը արձանագրելով, թե փորձագետների մեծամասնությունը տարբերակում էր արդիականացման երեք հիմնական ուղղություններ՝ տնտեսականը, քաղաքականը և մշակութայինը (թե ինչու չի առանձնացնում չորրորդը՝ սոցիալականը, հեղինակը չի բացատրում), ներկայացնում է համապատասխան չափորոշիչներով երեք խմբավորումները, որոնք են.

Տնտեսություն. Երկրի դուրս բերումը «աղքատության ծուղակից» ժամանակակից տնտեսական աճի թափանիվի գործարկումով, որն ուղեկցվում է արտադրողական ուժերի աճով՝ հիմքում ունենալով խոշոր մեքենաշինական արդյունաբերություն, ներքին համախառն արդյունքի (ՆՀԱ) կառուցվածքի մեջ գյուղատնտեսության չափաբաժնի փոքրացումով և վերամշակող ոլորտի ու ծառայությունների հատվածի տեսակարար կշռի մեծացումով, ինչպես նաև ազգաբ-

[1] Տե՛ս, Козловский В. В., Уткин А. И., Федотова В. Г., Модернизация: от равенства к свободе. СПб., 1995, с. 229.

[2] Տե՛ս, Аберкромби Н., Хилл С., Тернер Б. С., Социологический словарь. 2–е изд., перераб. и доп., Пер. с англ., М., 2004, с. 270.

նակչության կյանքի որակի աստիճանական բարձրացումով:

Արդյունաբերական (ինդուստրիալ) տնտեսության ենթակառուցվածքային հիմնակմախքի (կարկաս) ստեղծում և աշխատանքի միջազգային բաժանման մեջ պետության դիրքերի ամրապնդում:

Քաղաքականություն. Իշխանության մեխանիզմների արմատական նորացում, էլիտայի մեջ արդիականացմանն ուղղորդված համախոհների խմբի ձևավորում, որոնք միավորված են գաղափարախոսության և լուծվելիք խնդիրների ընդհանրությամբ: Իշխանության կառուցվածքի մեջ «տեխնոկրատների» տեսակարար կշռի աճ, խստագույն կադրային պատասխանատվության համակարգի կայացում աշխատանքի արդյունավետության հանրային և թափանցիկ (տրանսպարենտ) չափորոշիչների հիմքի վրա, կադրերի ռոտացիայի և ուղղահայաց սոցիալական լիֆտերի (վերելքի, to lift– բարձրացնել) մեխանիզմների կարգավորում (отладка):

Մշակույթ. Ազգային ավանդույթների դերի և սոցիալական կապերի թուլացում, աշխարհագրական շարժունության ակտիվացում և փոփոխություններ մարդկանց գիտակցության մեջ: Հասարակական գիտակցության հնամենի (արխայիկ) նախատիպերից (ստերեոտիպ, կարծրատիպ) հեռացում, որն արտահայտվում է նոր բարոյա–էթիկական կոորդինատների համակարգի ձևավորման մեջ, և որը համապատասխանում է սոցիալ–տնտեսական փոփոխությունների աճող տեմպին:[1]

Ավանդականից ժամանակակից հասարակության անցման առկա տիպային պատկերացումների, չափորոշիչների ներկայացումից հետո հետազոտողների որոշ մասը ցույց էր տալիս նաև բացասական այն միտումները (սպառնալիքները), որոնք ուղեկցում են արդիականացման գործընթացին: Այսպես, Ա. Վ. Գորդոնը նկատում է, որ «արդիականացման դասական ընկալման շրջանակներում «ավանդականության» և «այժմեականության» վիճակների միջև չէր նշմարվում որևէ պատմական տարածք. ենթադրվում էր զարգացող երկրների համբարձման (բարձրացման, вознесение) նման մի բան իրենց նախաստեղծ վիճակից դեպի հասարակության համաշխարհային քաղաքակրթական ստանդարտներ (չափօրինակներ): «Իդեալական» արդիականացման սխեման թելադրում էր երրորդ աշխարհի երկրների լրիվ խզում իրենց անցյալի հետ, հրաժարում ամեն տեսակ ժառանգորդումից, լրիվ սահմանազատում մշակութային ավանդույթից»:[2] Իսկ ավելի որոշակի Դ. Լերները նշում է, որ արդիականացումը «(1) հենվում է արևմտյան հասարակությունների զարգացման փորձի վրա և դրա համար էլ զարգացման էթնոկենտրոն մոդել է, (2) արդիականացումը անպայման չէ, որ հանգեցնում է արդյունաբերական աճի և սոցիալական բարիքների հավասար բաշխման, դա ըստ էության անհավասարաչափ գործընթաց է, որի արդյունքը կախյալ զարգացումն է»:[3]

Արդիականացման նպատակների

[1] Տե՛ս, Мальцев А. А., Модернизационная парадигма: теоретические подходы и исторический опыт.– “Мировая экономика и международные отношения”, 2012, N 4, с. 105–106.

[2] Гордон А. В., Самюэль Хантингтон и его концепция политической модернизации, с.16. 11.09.2013. http://yanko.lib.ru/books/politologiya/huntington–polit_poryadok–ru–a.htm ,

[3] Տե՛ս, Аберкромби Н., Хилл С., Тернер Б. С., Социологический словарь, 2–е изд., перераб. и доп. Пер. с англ. с. 271.

ճիշտ ընտրությունը հայաստանյան կտրվածքով և նրա արդյունավետությունը շատ բաներով կախված է այդ ճանապարհին անցած տարբեր ու բազմազան (բազմաքանակ) երկրների փորձի իմաստավորումից, որոշակի հատկանիշների հիման վրա տվյալ երկրների խմբավորումից և դասակարգումից, որի վերաբերյալ քաղաքագիտական ու սոցիոլոգիական գրականության մեջ առկա է որոշակի խոսույթ (դիսկուրս): Հասկանալի է, որ անհրաժեշտ է անդրադառնալ տեսակետներից գլխավորներին և բնորոշներին:

Այսպես, օրինակ, Գ. Յու. Սեմիգինը հանրագումարի բերելով արդիականացման տեսության ձեռքբերումները ավանդականից ռացիոնալ հասարակության անցման հայեցակարգերում առանձնացնում է արդիականացման երկու տեսակներ (տիպեր): Դրանք են. «1. օրգանական (ինքնատիպ), սպոնտան (ինքնաբերական) արդիականացում, որը բնորոշ է այն երկրներին, որոնք հասել են ռացիոնալ հասարակական կառուցվածքներին ներքին գործընթացների աստիճանական, տևական զարգացման արդյունքում (Անգլիա, ԱՄՆ), 2. երկրորդական, արտացոլված արդիականացում, որը բնորոշ է այն երկրներին, որոնք այս կամ այն պատճառներով հետ են մնացել իրենց զարգացման մեջ և այժմ շնորհիվ առաջադեմ երկրների փորձի լայն օգտագործման, ձգտում են հասնել նրանց կյանքի մակարդակով և որակով, մի յուրատեսակ «արդիականացում վազել–հասնելով»: Երկրորդական արդիականացման հիմնական գործոնը արդեն գոյություն ունեցող արդյունաբերական և հետարդյունաբերական մշակույթների գոյություն ունեցող կենտրոնների հետ սոցիոմշակութային շփումներն (կոնտակտներն) են»:[1]

Քաղաքագետ Ս. Ա. Լանցովը իր հերթին գրում է. «Արդիականացման գործընթացները բաժանվում են երկու տեսակի: Առաջինը օրգանական արդիականացումն է, որն իրականացել է Արևմտյան Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրներում, այսինքն այնտեղ, որտեղ ձևավորվեց ժամանակակից հասարակության երևույթը (ֆենոմենը): Անցումը նրան տվյալ պարագայում կոչվում է օրգանական, որովհետև այն ուներ բնապատմական գործընթացի բնույթ: Այն երկրներում, որոնք հետագայում կանգնեցին ժամանակակից հասարակության անցնելու ուղու վրա, արդիականացումը արդեն ունեցել է երկրորդական, հետևապես անօրգանական, հասնող բնույթ: Զարգացման տվյալ մոդելը հատուկ էր «երրորդ աշխարհի» երկրներին, և նա էլ հատկապես եղավ արդիականացման տեսության ուսումնասիրության առարկան»:[2]

Ուշադրության արժանի տեսակետ է արտահայտում նաև «Категории политической науки» աշխատանքի հեղինակային կոլեկտիվը՝ գրելով. «Ավանդական հասարակություններն ապրում են իրենց սեփական փակ (ինքնամփոփ, замкнутой) կյանքով: Որոշարկվել են նրանց փոխակերպման (трансформация) երկու առաջատար մոդելներ, որոնք ստացել են սպոնտան–օրգանական (այն գործում է ինքնազարգացման բավականին ուժեղ պոտենցիալի դեպքում) և հարկադրական–ինվերսիվ (переворачивание. այդ անվանումը արտացոլում է հասարակության վրա ճնշման առկայության փաստը նրա կառավարիչների կողմից կամ ար-

[1] Семигин Г. Ю., Модернизация политическая.– Политическая энциклопедия. В 2–х т., т. 2, М., 2000, с. 724–725.

[2] Տես, Политология. Учебник для вузов. Под ред. Д. Н. Ачкасова, В. А. Гуторова. М., 2009, с. 472.

տաքին ազդեցություն): Առաջինը բնորոշ է Արևմուտքի զարգացած հասարակություններին, երկրորդը՝ ժամանակակից զարգացող երկրներին: Վերոնշյալ տրամագծորեն հակադիր արդիականացման իդեալական տիպերի միջև տեղադրվում է «ուշ արդյունաբերականացման» երկրների բավականին մեծ խումբ (Գերմանիա, Իտալիա, Ճապոնիա, Ռուսաստան և ուրիշներ), որոնց քաղաքական զարգացումը համատեղում է երկու մոդելների հիմնական հատկանիշները»[1]:

Անշուշտ, ուրույն խմբավորումներ է ներկայացնում Ռ. Տ. Մուխաևը, առաջարկելով արդիականացման մոդելների սեփական չափորոշիչներ: «Արդիականացման նախադրյալների բավարարությունը կամ նրանց բացակայությունը,– գրում է նա,– պայմանավորում են վերափոխումների բնույթը (կամ հասարակության բոլոր ոլորտների միաժամանակյա փոփոխություն, կամ ընտրողական, նրանցից որևէ մեկից սկսած), նրանց տեմպը (բարեփոխումներ կարճ ժամկետներում կամ ժամանակի մեջ ձգված), արդիականացման գործընթացի ռազմավարությունն ու մարտավարությունը (վերափոխումներ «վերևից» ուժեղ իշխանության կողմից կամ ներքևից, հասարակության ճնշման տակ, կամ խառը տարբերակ)»:[2] Ըստ այդմ էլ, Ռ. Տ. Մուխաևը կատարում է հետևյալ դասակարգումը (խմբավորումները).

Դասական քառսային արդիականացման (Արևմտյան Եվրոպայի երկրներ, ԱՄՆ, Ավստրալիա): Այս մոդելը, գրում է հեղինակը, կարելի է անվանել նաև օրգանական մոդել, շնորհիվ արդիականացման պայմանների և գործոնների հասունացման սինխրոնության և օրգանականության՝ հանձին տնտեսական, սոցիալական, իրավական, քաղաքական և մշակութային նախադրյալների: Ընդսմին, անչափ կերպով տարաբաժանված հասարակության հավասարակշռության ձգտող կարևոր տարրերն էին կրոնը (հատկապես բողոքականությունը), զարգացած մշակութային ավանդույթները, որոնք նպաստեցին կոնսենսուսի (փոխհամաձայնության) և զարգացման մշակույթի մշակմանը:[3]

Ուշացած (запаздывающей) և անօրգանական արդիականացման մոդել, որը բնորոշ է, ըստ Ռ. Տ. Մուխաևի, Ճապոնիային, Բրազիլիային, Արգենտինային, բալկանյան երկրներին և որոնց մոտ ճեղքումը (прорыв) դեպի արդիականացում սկսվեց զգալիորեն ուշ՝ XVIII–XIX դարի սահմանագծին: Այստեղ արդիականացման գործընթացները սկսվեցին որոշ նախադրյալների՝ զարգացած շուկայի, քաղաքացիական հասարակության, իրավական պետության բացակայության պայմաններում: Իշխանությունը կրում էր ավտորիտար (հեղինակազոր) բնույթ: Ուստի արդիականացման տվյալ մոդելի գեներատորը դառնում է պետությունը, նրա առաջնորդները:[4] Որպես տիպական օրինակ Ռ. Տ. Մուխաևի կողմից առանձնացվում և ներկայացվում է Իսպանիան, երբ «Ֆրանկոյից հետո (1975 թ.) տոտալիտարիզմից (ամբողջատիրություն) անցումը ժողովրդավարության օբյեկտիվորեն պահանջեց անցումային քաղաքական ռեժիմ (վարչակարգ)՝ ավտորիտարը (ընդգծումը մերն է.– Լ.Շ., Տ.Շ.), որը ի վիճակի էր հասարակությանը հեռու պահել, քաղաքական ճգնաժամի պայմաններում, քաղաքացիական պատերազմից»:[5]

[1] Категории политической науки. А. Ю. Мельвиль [и др.] с. 377

[2] Мухаев Р. Т., Политология: учебник. М., 2009, с. 497..

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 497–498:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 498–499:

[5] Նույն տեղում, էջ 499:

Արդիականացման արագացված (форсированная) մոդել: Այս մոդելի (շրջանակներում) պարագայում բարեփոխումները սովորաբար սկսվում են տնտեսության որևէ ճյուղից, օրինակ՝ գյուղատնտեսության մեջ, որտեղ դեպի արտահանում ուղղորդված արտադրությունը 5–7 տարվա ընթացքում սահմանափակելով անհատական սպառումը, կուտակված կապիտալը ուղղորդում է դեպի արդյունաբերություն: Տվյալ գործընթացը ուղղորդվում է տոտալիտար կամ ավտորիտար ռեժիմների կողմից սահմանափակ ժամանակի (շուրջ 30–35 տարի) ընթացքում:[1]

Ուշացած և անօրգանական արդիականացման շրջանակներում է տեղավորում Ռ. Տ. Մուխաևը ճապոնական մոդելը, ցուցադրելով նրա ինչպես նմանությունը, այնպես էլ տարբերիչ գծերը (հատկապես մշակութային–քաղաքակրթական նախադրյալների կտրվածքով) արևմտյանից:[2]

Թերևս ուշադրության է արժանի Ռ. Տ. Մուխաևի կողմից արդիականացման սկանդինավյան մոդելի առանձնացումը, որի փոխակերպումը (կերպափոխությունը, տրանսֆորմացիան) տեղի ունեցավ շուրջ 180 տարվա ընթացքում, տնտեսական ու քաղաքական արդիականացման համար նախադրյալների զուգահեռ ստեղծման ճանապարհով բողոքական էթիկայի ակտիվ «օժանդակությամբ», նրա մեջ անհատականության (ինդիվիդուալիզմի), սեփականության, ազատության և մրցակցության արժեքների «ներդրումով»:[3]

Այսպիսով, վերոշարադրյալը որոշակի մեթոդաբանական նկատառումների շարադրանքի կտրվածքով թույլ է տալիս եզրակացնել, որ Ռ. Տ. Մուխաևը արդիականացող երկրները (մոդելները) խմբավորում է երկու համախումբ ընտանիքներում՝ ա) դասական քաոսային արդիականացման մոդել, հատուկ ենթախմբի՝ սկանդինավյան մոդելի առանձնացումով, բ) ուշացած և անօրգանական արդիականացման մոդել: Մեր այս եզրահանգումը հաստատվում է նույն Ռ. Տ. Մուխաևի իրավացի այն պնդումով, թե «կոնկրետ երկրում արդիականացման ձևերն ու մեխանիզմները պետք է որոշվեն ելակետ ունենալով հասարակության մշակութա–պատմական և սոցիալ–տնտեսական (ընդգծումն մերն է.– Լ.Շ., Տ.Շ.) հասունությունը»:[4]

Քննվող հիմնախնդրին անդրադառնում է նաև ռուսաստանցի ինքնատիպ քաղաքագետներից Ի. Ա. Վասիլենկոն: Արդիականացումը դիտելով համաշխարհային գործընթաց, որը պատմական զարգացման որոշակի էտապում «ապրում» են բոլոր երկրները ավանդականից դեպի այժմեականություն իրենց փոխակերպման ընթացքում, կատարում է ուշադրության արժանի հետևյալ դասակարգումը:

Ըստ Ի. Ա. Վասիլենկոյի, քաղաքական պատմության ընթացքում առանձնացնում են արդիականացման մի քանի էտապներ, կամ էշելոններ: Դրանք են.

Արևմտյան Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի (XV–XVII դարեր) երկրներ՝ առաջին էշելոն – այստեղ զարգանում է մանուֆակտուրային արտադրությունը, ձևավորվում է բուրժուազիան (երրորդ դասը), առաջանում է անհատական ձեռնարկատիրության էթիկան, շնորհիվ կրոնական Ռեֆորմացիայի և բողոքական էթիկայի:[5]

[1] Տես նույն տեղում, էջ 501:
[2] Տես նույն տեղում, էջ 503–505:
[3] Տես նույն տեղում, էջ 505–506:
[4] Նույն տեղում, էջ 305:
[5] Հանգամանորեն տես Վեբեր Մ., «Բողոքական էթիկան և կապիտալիզմի ոգին» (1904–1905 թթ.):

Երկրորդ էշելոն՝ Արևելյան Եվրոպայի երկրներ, Ռուսաստան, Թուրքիա և Ճապոնիա (XVIII–XIX դարի կես): Այս երկրներում արդիականացման գործընթացում վճռական դեր է խաղացել պետությունը, քանզի անբավարար հասունություն ունեին տնտեսական և սոցիալական պայմանները: Վերափոխումներն այստեղ ցանկություն էին առաջացնում «հասնել» առաջին էշելոնի երկրներին:

Երրորդ էշելոնը կազմում են Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրները (XIX դ. կես – XX դ. սկիզբ), Արևմուտքի նախկին գաղութները, քաղաքական անկախություն են ձեռք բերել արդիականացման քաղաքականության ընթացքում: Կանխավ ենթադրվում էր, թե այս՝ հետապնդող զարգացման՝ երկրները կդառնան ժամանակակից՝ քայքայելով (լուծարելով) քաղաքական կյանքի ավանդական կացութաձևերը, հրաժարվելով քաղաքակրթական առանձնահատկություններից և պատճենահանելով արևմտյան քաղաքական ինստիտուտները: Նույնիսկ աֆրիկյան 40 երկրներ արդիականացման ճանապարհին հաջողություններ չունեցան՝ «արտագրելով» ԱՄՆ–ի սահմանադրությունը: Տեսության ոլորտում առաջացան սկզբունքային հարցադրումներ:[1]

Ուշադրության արժանի տեսակետ է ներկայացնում Ի. Դ. Կորոտեցը Դոնի Ռոստովից: Վերջինիս փորձում է օբյեկտիվությամբ արտացոլել հետխորհրդային իրականությունը, և ինչպես մեզ է թվում, հեռանկարային է հետագա հետազոտական աշխատանքի առումով: Ի. Դ. Կորոտեցը գրում է. «Այժմ արդիականացման մրցույթին մասնակցում են արևելյան մշակույթի երկրների մի քանի խմբեր, որոնք XX դարի վերջին հասել են զգալի տեխնոլոգիական տեղաշարժերի: Այդ երկրների քաղաքական համակարգերն ունեն արդիականացման զարգացման պաշարներ: Դրանք են Ճապոնիան, Հարավային Կորեան, Հոնկոնգը, Թայվանը, Չինաստանը և մի շարք այլ երկրներ, որոնք հավակնում են այն բանին, որպեսզի հաջորդ դարում իրենք որոշեն քաղաքակրթության ձևը:

Երկրներ, որոնք ավանդականորեն անվանվում են (կոչվում են) «զարգացող» Բրազիլիա, Արգենտինա, Չիլի, Մեքսիկա, Աֆրիկայի երկրներ և այլն, հասնում են որոշակի հաջողությունների, սակայն ամբողջապես արդիականացումը իրականանում է դանդաղ:

Երրորդ խումբ՝ հետսոցիալիզմի երկրներ (ընդգծումները մերն են.– Լ.Շ., Տ.Շ.), ներառյալ Ռուսաստանը: Այստեղ խնդիրներն ավելի շատ են, քան ցանկալի կլիներ: Մի շարք գիտնականներ կարծում են, թե այդ երկրների արդիականացման համար պահանջվում են ողջ աշխարհի ջանքերը»:[2] Այս ձևակերպման մեջ գրավիչը արդիականացման տեսության շրջանակներում 1) արևելյան մշակույթի երկրների համախմբումն է որպես քաղաքակրթական սպեցիֆիկայի կրողի և 2) հետսոցիալիզմի երկրների՝ որպես «սոցիալ–տնտեսական ու մշակութա–պատմական նույնականացմամբ» օժտված միավորի առանձնացումը, անշուշտ, որոշակի վերապահումով (առաջին հերթին նկատի ունենք տարբեր երկրներում քաղաքական մշակույթի պատմական տարբեր անցյալը):

[1] Տե՛ս, Василенко И. А., Политология. 2–е изд., перераб. и доп., М., 2009, с. 68–69:

[2] Коротец Д., Модернизация.– Политология. Краткий энциклопедический словарь–справочник. Отв. ред. Ю. С. Борцов, Науч. рук. И. Д. Коротец. Ростов на Дону, 1997, с. 202.

Պետք է ընդունել, որ դասակարգումներից (խմբավորումներից) յուրաքանչյուրն ունի որոշակի արժանիքներ, բխում է պատմական փորձից և հիմնավորված ու տրամաբանված է տեսական որևէ կառուցվածքի ենթատեքստում: Սակայն, ինչպես ցույց է տալիս նույնիսկ հետսոցիալիստական երկրների զարգացումը, այդուհանդերձ, ամենաարդյունավետը որպես «արդիականացման միջուկ» հանդես եկող «մշակութային ինքնությունն է»: Վերջինս արդիականացման գործընթացին հաղորդում է անհրաժեշտ խորք, իսկ քաղաքական գիտությանը տալիս է հստակ կողմնորոշիչներ (հարացույց): Ասվածը հաստատվում է ֆրանսիացի գիտնական Ֆերնան Բրոդելի այն դիտարկումով, որ «մանկամտորեն պարզունակ կլիներ մտածելը, թե արդիականացումը կամ քաղաքակրթության հաղթանակը կարող է հանգեցնել պատմական մշակույթների բազմաքանակության ավարտին, որոնք առարկայացած են մեծագույն համաշխարհային քաղաքակրթությունների հարյուրամյակներում»:[1] Ընդհակառակը, եզրակացնում է Սամյուել Հանթինգթոնը, արդիականացումը «ուժեղացնում է այդ մշակույթները և կրճատում է Արևմուտքի հարաբերական ազդեցությունը: Հիմնաբար մակարդակում աշխարհը դառնում է ավելի ժամանակակից և քիչ արևմտյան»:[2]

Ֆ. Բրոդելի և Ս. Հանթինգթոնի՝ արդիականացման տեսության հետագա զարգացման համար չափազանց հեռանկարային տեսակետը ներդաշնակորեն լրանում է, մասնավորապես, Վ. Գ. Ֆեդոտովայի այն դիտարկումով, որ մեր օրերում արդիականացումը դադարել է հետապնդող լինելուց և իրականանում է հասարակությունների մշակույթների հիմքի վրա կամ առնվազն նրանց յուրահատկությունների հաշվառումով, որ XXI դարում արդիականացման ավազանում են ընդգրկվել բազմաթիվ ոչ արևմտյան երկրներ՝ Ռուսաստանը, Չինաստանը, Հնդկաստանը, Բրազիլիան, Ինդոնեզիան, որոնք կողմնորոշված են արդիականացման համատեղմանը իրենց մշակույթների հիմքերի հետ, որ այդ բոլորը տեղի է ունենում նոր մեգատրենդ՝ գլոբալացման պայմաններում, որը մշակութային բազմազանությունն ընդունում է գլոբալ մասշտաբով:[3] Արդիականացման այս տարբերակը Վ. Գ. Բուրովը և Վ. Գ. Ֆեդոտովան դիտում են ավտոխտոն (անդրենածին) զարգացման տրամաբանությունից բխող: Այսպես, նկատի ունենալով չինական վերջին տասնամյակների իրականությունը, նրանք գրում են, որ չին առաջնորդներից Հու Ձին Տաոն հայտարարել է. «Չինաստանը մասնակցում է միջազգային գործերին և կատարում է իր միջազգային պարտավորություններն ու փոխգործողությունը այլ երկրների հետ արդար և ռացիոնալ նոր միջազգային կարգի կազմակերպման գործում»: Ռացիոնալությունն այստեղ դեկարտյան չէ, այլ կոնֆուցիական: Նրանք, ում այդ բոլորը թվում է ընդհանրապես ոչ ռացիոնալ, պետք է հաշվի նստեն հետկոմունիստական երկրների, առաջին հերթին Ռուսաստանի, Չինաստանի, Հնդկաստանի, Բրազիլիայի և Ինդոնեզիայի ավտոխտոն (ընդգծումը մերն է.– Լ.Շ., Տ.Շ.) զարգացման տրամաբանության հետ»:[4]

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝ 09. 09.2013 թ.

[1] Տես, Хантингтон С., Столкновение цивилизаций. Пер. с англ., 2007, с. 110.

[2] Նույն տեղում:

[3] Տես «Полис», 2013, N 3, էջ 111:

[4] Буров В. Г., Феодорова В. Г., Китайский олыт модернизации: теория и практика.- “Вопросы философии”, 2008, N 5, с. 18.

МОДЕРНИЗАЦИЯ ПОЛИТИЧЕСКОГО ДИСКУРСА И ЕЕ РАЗВИТИЕ

ШИРИНЯН ЛЕВОН

Заведующий кафедрой политологии и истории права АГПУ имени Х. Абовяна, доктор политических наук, профессор

ШИРИНЯН ТАТЕВИК

Преподаватель политологии и истории права АГПУ имени Х. Абовяна

Каждое государство на определенной ступени политического развития становится перед выбором стать современным – модернизироваться. Отсюда дальнейшая разработка теории модернизации и вопрос выбора пути модернизации, который в равной степени относится и к армянскому политическому мышлению и к разностороннему развитию РА. Трудность состоит в том, как модернизироваться – западнизироваться или модернизироваться на основе «собственной культурной начинки». Отсюда и необходимость широкого политического дискурса.

Дата представления статьи: 09.09.2013 г.

POLITICAL DISCOURSE OF MODERNIZATION AND ITS DEVELOPMENTS

LEVON SHIRINYAN

Doctor of Political Sciences, Professor, Head of the Chair of Politics and Law History, ASPU after Kh. Abovyan

TATEVIK SHIRINYAN

Lecturer of the Chair of Politics and law History, ASPU after Kh. Abovyan

Every state during some historical period stands before the choice of becoming modern via modernization. There comes the problem of modernization theory which is vital for both political ideas and comprehensive development of the Republic of Armenia. The issue lies in the ways of modernization: to become modern via Westernization, or relying on the own cultural base? There comes the necessity of political discourse.

Article submission date 09.09.2013